



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060-88-89-99, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2025 թվականի N 547-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Արկադիկ Խաչիկի Մկրտչյանի դիմումը և այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկալանջ գյուղում գտնվող 04-051-0048-0007 կադաստրային ծածկագրով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերի՝ 0,0228 հա հողամասի վրա 47,7 քմ արտաքին մակերեսով հասարակական նշանակության շինությունների կառուցման աշխատանքները իրականացվել է Արկադիկ Խաչիկի Մկրտչյանի /ծնված՝ 02.07.1991թ., անձնագիր՝ AR0592900, տրված 19.02.2018թ., 057-ի կողմից/ կողմից.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արկադիկ Խաչիկի Մկրտչյանին ուղղակի վաճառքով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկալանջ գյուղի 1-ին փողոց 2/2 հասցեում, 04-051-0048-0007 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0,0228 հա հողամասը և 47,7 քմ արտաքին մակերեսով շինությունները /հիմք՝ համայնքի ղեկավարի 2024 թվականի հոկտեմբերի 22-ի N 1046-Ա որոշմամբ ստացված սեփականության վկայական N 21112024-04-0053 / օտարել, հողամասի համար՝ **390615** /երեք հարյուր իննսուն հազար վեց հարյուր տասնհինգ / ՀՀ դրամ պետք է վճարի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկալանջ գյուղի ֆոնդային եկամուտների **900325179134** հաշվեհամարին, իսկ շինության համար՝ **441321** / չորս հարյուր քառասունմեկ հազար երեք հարյուր քսանմեկ/ ՀՀ դրամ պետք է վճարի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի վարչական եկամուտների **900325188150** հաշվեհամարին: 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

2. Արկադիկ Խաչիկի Մկրտչյանի հետ կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները պետական գրանցման:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. մայիսի 26
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք
գ.Գեղակերտ, Մաշտոցի 30, 060-88-89-99, էլ. hmayt khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2025 թվականի N 548-Ա

**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՅՆԵԼՈՒ ԵՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի N 329-Ա ՈՐՈՇՈՒՄՆ
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> 37-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, <<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, հաշվի առնելով կադաստրի կոմիտեում հաշվառված, չափագրման տվյալների մուտքագրման 2024G9UQK9, ծածկագիրը և հիմք ընդունելով Ծովինար Վահագի Մուրադյանի դիմումը՝ իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ամբերդ գյուղի Մ. Մնացականյան փողոց 27 բնակելի տուն հասցեում կառուցված ինքնական շինությունները օրինականացնելու համար, կառույցը չի հակասում քաղաքաշինական նորմերը և չի առաջացնում սերվիտուտ, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերի նախատեսված գոտիներում գտնվող կառույցների՝ ծրագրի պայմաններին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել քաղաքացի Ծովինար Վահագի Մուրադյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ամբերդ գյուղի Մ. Մնացականյան փողոց 27 բնակելի տուն հասցեում գտնվող /իրավունքի պետական գրանցման վկայականի N 03012022-04-0023 / 04-008-0004-0017 կադաստրային ծածկագրով 0,12198 հա փաստացի օգտագործվող հողամասի վրա կառուցված ընդամենը 89,1 քմ արտաքին մակերեսով ինքնական

շինությունները / 77,2 քմ մակերեսով բնակելի տուն , կառուցված՝ 2020թ., իսկ 11,9 քմ մակերեսով օժանդակ շինությունը, կառուցված՝ 2020թ. թողնել ինքնակամ/:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման համար սահմանված վճարը կազմում է 79370/ յոթանասունինը հազար երեք հարյուր յոթանասուն /<< դրամ:

3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը Ծովինար Վահագի Մուրադյանը /անձնագիր՝ AU0295808, տրված 03.06.2021թ, 057-ի կողմից/, պետք է 60-օրյա ժամկետում վճարի Արմավիրի մարզի Խոյ համայնքի վարչական եկամուտների 900325188150 հաշվեհամարին՝ 79370 / յոթանասունինը հազար երեք հարյուր յոթանասուն / << դրամ, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստան Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:

5. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2025 թվականի ապրիլի 1-ի <<Ինքնակամ կառուցված շինությունն օրինականացնելու մասին>> թիվ 329-Ա որոշումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025 թվականի մայիսի 26
Խոյ համայնք գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2025 թվականի N 549-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 12-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 22-ի N153-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Գեղակերտ գյուղում գործող «ԷՅ ԸՆԴ ԶԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի գործադիր մարմնի ղեկավար՝ Արմեն Աբգարյանի կողմից 2025 թվականի մայիսի 23-ին ներկայացրած հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Թույլատրել «ԷՅ ԸՆԴ ԶԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին Խոյ համայնքի Գեղակերտ գյուղի Խ.Դաշտենցի փողոց 1 հասցեում գտնվող լցակայանի տարածքում /կադաստրային ծածկագիր 04-087-0052-0037/ տեղադրելու արտաքին գովազդ՝ 2025 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար:

2.Խոյի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնին՝ «ԷՅ ԸՆԴ ԶԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին տալ համապատասխան թույլտվություն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. մայիսի 26
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք
գ. Գեղակերտ, Մաշտոցի 30, 060-888-999, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2025 թվականի N 550-Ա

**ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 42,3 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՕԺԱՆԴԱԿ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված կարգի.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Մրգաստան գյուղի 7-րդ փողոց թիվ 2 բնակելի տուն հասցեում գտնվող 04-068-0026-0008 կադաստրային ծածկագրով 0,12 հա մակերեսով փաստացի օգտագործվող բնակավայրերի, բնակելի կառուցապատման նշանակության հողամասի վրա կառուցված 04-068-0026-0008-002 ծածկած մուտք, 04-068-0026-0008-003 լոգարան, 04-068-0026-0008-006 ծածկ և 04-068-0026-0008-007-000 խորդանոց ծածկագրերով /ըստ իրավունքի պետական գրանցման վկայականի N 02032012-04-0059/ 42,3 քմ մակերեսով օժանդակ շինությունների, գործառնական նշանակությունը փոխել բնակելի տուն գործառնական նշանակության:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2025 թվականի մայիսի 26
Խոյ համայնք գ. Գեղակերտ



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2025 թվականի N 551-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 9-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 22-ի N153-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Գեղակերտ գյուղում գործող «ԷՅ ԸՆԴ ԶԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի գործադիր մարմնի ղեկավար՝ Արմեն Աբգարյանի կողմից 2025 թվականի մայիսի 23-ին ներկայացրած հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Թույլատրել «ԷՅ ԸՆԴ ԶԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին Խոյ համայնքի Գեղակերտ գյուղի Խ.Դաշտենց փողոց 1 հասցեում գտնվող հիմնական շինությունում /կադաստրային ծածկագիր 04-087-0052-0037/ զբաղվելու տեխնիկական հեղուկների վաճառքով՝ 2025 թվականի համար:
- Խոյի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնին՝ «ԷՅ ԸՆԴ ԶԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին տալ համապատասխան թույլտվություն:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. մայիսի 26
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2025 թվականի N 552-Ա

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԶՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի ղեկավար Լյուդվիկ Յայլոյանս, ուսումնասիրելով **Հրանուշ Արշալույսի Ավագյանի, Արթուր Լևոնի Ավագյանի, Արտակ Լևոնի Ավագյանի, Ցոլակ Լևոնի Ավագյանի** նկատմամբ հարուցված թիվ 46/25 վարչական վարույթի նյութերը, պարզեցի՝

Հրանուշ Արշալույսի Ավագյանը, Արթուր Լևոնի Ավագյանը, Արտակ Լևոնի Ավագյանը, Ցոլակ Լևոնի Ավագյանը, հանդիսանալով հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտներ, «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չեն կատարել հարկեր վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ Խոյի համայնքապետարանի աշխատակազմի Բյուջետային մուտքերի ապահովման բաժնի կողմից 2025 թվականի փետրվարի 19-ին «Վեկտոր Պյուն» և *E-community* ծրագրերից ստացված տեղեկանքների հիման վրա Խոյի համայնքապետարանը 2025 թվականի ապրիլի 29-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցել է վարչական վարույթ:

Հրանուշ Արշալույսի Ավագյանին, Արթուր Լևոնի Ավագյանին, Արտակ Լևոնի Ավագյանին, Ցոլակ Լևոնի Ավագյանին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով սահմանված կարգով պատշաճ կերպով ծանուցվել է վարչական վարույթի հարուցման մասին՝ ծանուցումն ուղարկվել է /հիմք՝ 30 ապրիլի 2025 թվական. թիվ 46 ծանուցումը/: Վերջիններիս առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 3-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լուծման անցկացնելու վերաբերյալ և կատարել համայնքի հանդեպ առաջացած հարկային պարտավորությունները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ **Հրանուշ Արշալույսի Ավագյանը, Արթուր Լևոնի Ավագյանը, Արտակ Լևոնի Ավագյանը, Ցոլակ Լևոնի Ավագյանը**՝ սահմանված կարգով պատշաճ կերպով ծանուցվելուց հետո չեն ներկայացրել պնդում լուծման անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լուծման չի անցկացվել:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ըննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Հիմք ընդունելով գույքային հարկերի հաշվառման համակարգ հանդիսացող «Վեկտոր Պյուս» և E-community ծրագրերից ձեռք բերված տվյալները՝ **Հրանուշ Արշալույսի Ավագյանը, Արթուր Լևոնի Ավագյանը, Արտակ Լևոնի Ավագյանը, Յուլակ Լևոնի Ավագյանը** չեն կատարել ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արշալույս գյուղում գտնվող, իրենց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի հարկային պարտավորությունները, որի հետևանքով 2025 թվականի փետրվարի 19-ի դրությամբ գոյացել է՝ **ընդամենը 138132 /հարյուր երեսունութ հազար հարյուր երեսուներկու/ ՀՀ դրամ** հողի հարկի և անշարժ գույքի հարկի հարկային պարտավորություն:

ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արշալույս գյուղում գտնվող 04-021-0351-0001 /0.47 հա/ և 04-021-0343-0001 /0.28 հա/ կադաստրային ծածկագրերով ջրովի վարելահողերի ընդհանուր պարտքը կազմում է՝ **138132 /հարյուր երեսունութ հազար հարյուր երեսուներկու/ ՀՀ դրամ, որից 2020 թվականը ներառյալ՝ 65443 /վաթսունհինգ հազար չորս հարյուր քառասուններեք/ ՀՀ դրամ, որից ապառք՝ 48339 /քառասունութ հազար երեք հարյուր երեսունինը/ ՀՀ դրամ, տույժ՝ 17104 /տասնյոթ հազար հարյուր չորս/ ՀՀ դրամ և 2021-2024 թվականը ներառյալ՝ 72689 /յոթանասուներկու հազար վեց հարյուր ութսունինը/ ՀՀ դրամ, որից ապառք՝ 61367 /վաթսունմեկ հազար երեք հարյուր վաթսունյոթ/ ՀՀ դրամ, տույժ՝ 11322 /տասնմեկ հազար երեք հարյուր քսաներկու/ ՀՀ դրամ:**

Հրանուշ Արշալույսի Ավագյանը, Արթուր Լևոնի Ավագյանը, Արտակ Լևոնի Ավագյանը, Յուլակ Լևոնի Ավագյանը ծանուցումն ստանալուց հետո կատարել են **65443 /վաթսունհինգ հազար չորս հարյուր քառասուններեք/ ՀՀ դրամ** հողի հարկի վճարում:

Համաձայն 2025 թվականի մայիսի 23-ի «Վեկտոր Պյուս» ծրագրից տեղական հարկերի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքների՝ 04-021-0351-0001 և 04-021-0343-0001 կադաստրային ծածկագրերով ջրովի վարելահողերի 2018-2020 թվականների հողի հարկի գծով պարտավորություններն ամբողջությամբ կատարվել են: Արդյունքում՝ համաձայն 2025 թվականի փետրվարի 19-ի **E-community** ծրագրից ստացված տեղեկանքների՝ 04-021-0351-0001 /0.47 հա/ և 04-021-0343-0001 /0.28 հա/ կադաստրային ծածկագրերով ջրովի վարելահողերի անշարժ գույքի հարկի գծով հարկային պարտավորությունը **2021-2024 թվականը ներառյալ կազմում է՝ 72689 /յոթանասուներկու հազար վեց հարյուր ութսունինը/ ՀՀ դրամ, որից ապառք՝ 61367 /վաթսունմեկ հազար երեք հարյուր վաթսունյոթ/ ՀՀ դրամ, տույժ՝ 11322 /տասնմեկ հազար երեք հարյուր քսաներկու/ ՀՀ դրամ:**

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

ՀՀ հարկային օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգրքի/ 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են տեղական հարկեր, որոնց տեսակներն են՝ անշարժ գույքի հարկը և փոխադրամիջոցների գույքահարկը:

Օրենսգրքի 224-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար ՀՀ հարկային օրենսգրքի 45-րդ գլխով սահմանված կարգով ՀՀ համայնքների բյուջեներ

վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք...

Օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները (հողամասերում կառուցված ստորգետնյա և վերգետնյա շենքերը, շինությունները կամ կառույցները...

Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են հարկ վճարողների և անշարժ գույքի հարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունները և ֆիզիկական անձինք անշարժ գույքի հարկի տարեկան գումարները անշարժ գույքի գտնվելու վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը:

Օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն՝ հարկային իրավախախտում է համարվում հարկ վճարողի կամ հարկային գործակալի հակաիրավական այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ ՀՀ օրենքներով սահմանված է հարկային պատասխանատվություն:

Օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը ավարտված հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող հարկային պարտավորությունները 2018 թվականի հունվարի 1-ից հետո դադարած չեն համարվում և ենթակա են կատարման մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով և ժամկետներում: Նույն հոդվածի 1.1-րդ մասի համաձայն՝ մինչև օրենսգրքի 11-րդ և 12-րդ բաժիններն ուժի մեջ մտնելն ավարտված հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ գույքահարկի և հողի հարկի գծով հարկային պարտավորությունները 2021 թվականի հունվարի 1-ից հետո դադարած չեն համարվում և ենթակա են կատարման մինչև օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով և ժամկետներում:

Հարկային պատասխանատվությունը իրավական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է, որն ուղղված է պետության ֆինանսական կայունության և ֆինանսական շահերի ապահովմանը՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթները խախտելու հետևանքով պետությանը պատճառված նյութական վնասի լրիվ ծավալով հատուցման, հարկային իրավախախտում կատարած հարկ վճարողի նկատմամբ լրացուցիչ պարտավորություն սահմանելու, ինչպես նաև նրան հարկային պարտավորության անհապաղ կատարումը պարտադրելու և հետագա հարկային իրավախախտումները կանխարգելելու միջոցով:

Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը...:

«Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 01.01.2021) 8-րդ հոդվածի համաձայն՝ եթե հողի հարկով հարկվող օբյեկտն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է մեկից ավելի հարկ վճարողների, ապա հողի հարկի՝ սույն օրենքով սահմանված պարտավորությունների համար նրանք կրում են համապարտ պատասխանատվություն:

Նույն օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է՝ հողի հարկի հաշվարկման համար հիմք են հանդիսանում հողի սեփականության, մշտական կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հիմնավորող փաստաթղթերը:

«Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ հողի հարկի չափը կապված է վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից և սահմանվում է հողակտորի միավոր մակերեսի համար հաստատագրված վճարի ձևով, որը վճարվում է տարվա համար: Սույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամուտը: Նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ գյուղատնտեսական նշանակության հողերի (ներառյալ բնակավայրերում բնակչին արարության համար հատկացված, տնամերձ և այգեգործական (ամառանոցային) հողամասերը) համար հողի հարկի դրույքաչափը սահմանվում է դրանց կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամտի 15 տոկոսի չափով:

«Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձանց հողի հարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային տարին, 16-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձինք հողի հարկի տարեկան գումարը սույն հոդվածով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում երկու հավասար մասերով, մինչև հաշվետու տարվա նոյեմբերի 15-ը (ներառյալ):

Հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Մինչև 2018 թվականի հունվարի 1-ը գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը (հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալը) վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0,15 տոկոսի չափով: Նշված չափերով օրական տույժերը կիրառվում են, եթե հարկային օրենսդրությամբ ավելի նվազ չափ սահմանված չէ:

Վերոհիշյալ տույժը կիրառվում է ժամանակին չմուծված հարկի գումարների (այդ թվում նաև հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի կողմից չվճարված), հարկերի կանխավճարային մուծումների գումարների, ստուգման արդյունքներով հայտնաբերված (պակաս ցույց տրված) հարկվող օբյեկտի գծով հարկի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

ՀՀ հարկային օրենսգրքի (ուժի մեջ է մտել 01.01.2018 թվականին) մինչև 14.05.2020 թվականը գործող խմբագրությամբ 401-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.075 տոկոսի չափով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված տույժը կիրառվում է ժամանակին չմուծված հարկի գումարի (այդ թվում՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի կողմից չվճարված), հարկերի կանխավճարային գումարների, հարկային հսկողության արդյունքներով հայտնաբերված (պակաս ցույց տրված) հարկի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Նույն մասի 4-րդ կետի համաձայն՝ քաղաքական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասով, ՀՀ հարկային օրենսգրքի 6-րդ, 224-րդ, 225-րդ, 226-րդ, 227-րդ, 236-րդ, 397-րդ հոդվածներով, 447-րդ հոդվածի 1-ին և 1.1-րդ մասերով, «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-4-րդ, 8-րդ, 12-րդ, 14-րդ և 16-րդ հոդվածներով, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 34-րդ հոդվածով, 38-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով, 53-րդ, 58-60-րդ և 89-րդ հոդվածներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հրանուշ Արշալույսի Ավագյանից, Արթուր Լևոնի Ավագյանից, Արտակ Լևոնի Ավագյանից, Ցոլակ Լևոնի Ավագյանից՝ հոգուտ ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի բյուջեի գանձել ընդհանուր՝ 72689 /յոթանասուներկու հազար վեց հարյուր ութսունինը/ ՀՀ դրամ, որից 2021-2024 թթ. ներառյալ՝ 72689 /յոթանասուներկու հազար վեց հարյուր ութսունինը/ ՀՀ դրամ, որից ապառք՝ 61367 /վաթսունմեկ հազար երեք հարյուր վաթսունյոթ/ ՀՀ դրամ, տույժ՝ 11322 /տասնմեկ հազար երեք հարյուր քսաներկու/ ՀՀ դրամ:

2. 2021-2024 թթ. ներառյալ անշարժ գույքի հարկի հաշվարկված ապառքը և տույժերը վճարել Խոյ համայնքի Արշալույս գյուղի 900325006071 հաշվեհամարին:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ Խոյ համայնքի ղեկավարին, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարանին՝ երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. մայիսի 26

Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2025 թվականի N 553-Ա

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ
ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի ղեկավար Լյուդվիկ Յայլոյանս, ուսումնասիրելով **Նվեր Անդրանիկի Հարությունյանի, Մելանյա Ավետիսի Ավետիսյանի, Կառլեն Նվերի Հարությունյանի, Սերժիկ Նվերի Հարությունյանի, Արփիկ Նվերի Հարությունյանի** նկատմամբ հարուցված թիվ 44/25 վարչական վարույթի նյութերը, **պարզեցի՝**

Նվեր Անդրանիկի Հարությունյանը, Մելանյա Ավետիսի Ավետիսյանը, Կառլեն Նվերի Հարությունյանը, Սերժիկ Նվերի Հարությունյանը, Արփիկ Նվերի Հարությունյանը /ՀՀ Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ. Գեղակերտ, Գ. Մարգարյան փողոց 15 տուն/, հանդիսանալով հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտներ, «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չեն կատարել հարկեր վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ Խոյի համայնքապետարանի աշխատակազմի Բյուջետային մուտքերի ապահովման բաժնի կողմից 2025 թվականի փետրվարի 3-ին «**Վեկտոր Պյուս**» և *E-community* ծրագրերից ստացված տեղեկանքների հիման վրա Խոյի համայնքապետարանը 2025 թվականի ապրիլի 29-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցել է վարչական վարույթ:

Նվեր Անդրանիկի Հարությունյանին, Մելանյա Ավետիսի Ավետիսյանին, Կառլեն Նվերի Հարությունյանին, Սերժիկ Նվերի Հարությունյանին, Արփիկ Նվերի Հարությունյանին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով սահմանված կարգով պատշաճ կերպով ծանուցվել է վարչական վարույթի հարուցման մասին՝ ծանուցումն ուղարկվել է /հիմք՝ 30 ապրիլի 2025 թվական. թիվ 44 ծանուցումը/: Վերջիններիս առաջարկվել է ծանուցումը ստանալուց **հետո 3-օրյա ժամկետում** ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ և կատարել համայնքի հանդեպ առաջացած հարկային պարտավորությունները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ **Նվեր Անդրանիկի Հարությունյանը, Մելանյա Ավետիսի Ավետիսյանը, Կառլեն Նվերի Հարությունյանը, Սերժիկ Նվերի Հարությունյանը, Արփիկ Նվերի Հարությունյանը՝** սահմանված կարգով պատշաճ կերպով ծանուցվելուց հետո չեն ներկայացրել պնդում լսում անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լսում չի անցկացվել:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Հիմք ընդունելով գույքային հարկերի հաշվառման համակարգ հանդիսացող «Վեկտոր Պյուս» և *E-community* ծրագրերից ձեռք բերված տվյալները՝ **Նվեր Անդրանիկի Հարությունյանը, Մելանյա Ավետիսի Ավետիսյանը, Կառլեն Նվերի Հարությունյանը, Սերժիկ Նվերի Հարությունյանը, Արփիկ Նվերի Հարությունյանը** չեն կատարել ՀՀ Արմավիրի մարզի խոյ համայնքի Գեղակերտ գյուղում գտնվող, իրենց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի հարկային պարտավորությունները, որի հետևանքով 2025 թվականի փետրվարի 3-ի դրությամբ գոյացել է՝ **ընդամենը 326977 /Երեք հարյուր քսանվեց հազար ինը հարյուր յոթանասունյոթ/ ՀՀ դրամ** հողի հարկի և անշարժ գույքի հարկի հարկային պարտավորություն:

ՀՀ Արմավիրի մարզի խոյ համայնքի Գեղակերտ գյուղում գտնվող 04-087-0054-0004 /0.0894 հա/ կադաստրային ծածկագրով բնակելի կառուցապատման հողամասի և 04-087-0136-0025 /0.81 հա/ կադաստրային ծածկագրով ջրովի վարելահողի ընդհանուր պարտքը կազմում է՝ **326977 /Երեք հարյուր քսանվեց հազար ինը հարյուր յոթանասունյոթ/ ՀՀ դրամ, որից 2020 թվականը ներառյալ՝ 259731 /Երկու հարյուր հիսունինը հազար յոթ հարյուր երեսունմեկ/ ՀՀ դրամ, որից ապառք՝ 159807 /հարյուր հիսունինը հազար ութ հարյուր յոթ/ ՀՀ դրամ, տույժ՝ 99924 /իննսունինը հազար ինը հարյուր քսանչորս/ ՀՀ դրամ և 2021-2024 թվականը ներառյալ՝ 67246 /վաթսունյոթ հազար երկու հարյուր քառասունվեց/ ՀՀ դրամ, որից ապառք՝ 54488 /հիսունչորս հազար չորս հարյուր ութսունութ/ ՀՀ դրամ, տույժ՝ 12758 /տասներկու հազար յոթ հարյուր հիսունութ/ ՀՀ դրամ:**

Նվեր Անդրանիկի Հարությունյանը, Մելանյա Ավետիսի Ավետիսյանը, Կառլեն Նվերի Հարությունյանը, Սերժիկ Նվերի Հարությունյանը, Արփիկ Նվերի Հարությունյանը ծանուցումն ստանալուց հետո՝ 2025 թվականի մայիսի 2-ին, կատարել են անշարժ գույքի հարկի վճարում: Արդյունքում՝ 2025 թվականի մայիսի 26-ին *E-community* ծրագրից ձեռք բերված տվյալների համաձայն՝ 04-087-0054-0004 /0.0894 հա/ կադաստրային ծածկագրով բնակելի կառուցապատման հողամասի և 04-087-0136-0025 /0.81 հա/ կադաստրային ծածկագրով ջրովի վարելահողի հողի հարկի և անշարժ գույքի հարկի գծով հարկային պարտավորությունը կազմում է՝ **285071 /Երկու հարյուր ութսունինը հազար յոթանասունմեկ/ ՀՀ դրամ, որից 2020 թվականը ներառյալ՝ 259731 /Երկու հարյուր հիսունինը հազար յոթ հարյուր երեսունմեկ/ ՀՀ**

դրամ, որից ապառք՝ 159807 /հարյուր հիսունինը հազար ութ հարյուր յոթ/ ՀՀ դրամ, տույժ՝ 99924 /իննսունինը հազար ինը հարյուր քսանչորս/ ՀՀ դրամ և 2021-2024 թվականը ներառյալ՝ 25340 /քսանհինգ հազար երեք հարյուր քառասուն/ ՀՀ դրամ, որից ապառք՝ 12715 /տասներկու հազար յոթ հարյուր տասնհինգ/ ՀՀ դրամ, տույժ՝ 12625 /տասներկու հազար վեց հարյուր քսանհինգ/ ՀՀ դրամ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մոծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

ՀՀ հարկային օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգիրք/ 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են տեղական հարկեր, որոնց տեսակներն են՝ անշարժ գույքի հարկը և փոխադրամիջոցների գույքահարկը:

Օրենսգրքի 224-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար ՀՀ հարկային օրենսգրքի 45-րդ գլխով սահմանված կարգով ՀՀ համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք...

Օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները (հողամասերում կառուցված ստորգետնյա և վերգետնյա շենքերը, շինությունները կամ կառույցները...

Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են հարկ վճարողների և անշարժ գույքի հարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունները և ֆիզիկական անձինք անշարժ գույքի հարկի տարեկան գումարները անշարժ գույքի գտնվելու վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը:

Օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն՝ հարկային իրավախախտում է համարվում հարկ վճարողի կամ հարկային գործակալի հակաիրավական այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ ՀՀ օրենքներով սահմանված է հարկային պատասխանատվություն:

Օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը ավարտված հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող հարկային պարտավորությունները 2018 թվականի հունվարի 1-ից հետո դադարած չեն համարվում և ենթակա են կատարման մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով և ժամկետներում: Նույն հոդվածի 1.1-րդ մասի համաձայն՝ մինչև օրենսգրքի 11-րդ և 12-րդ բաժիններն ուժի մեջ մտնելն ավարտված

հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ գույքահարկի և հողի հարկի գծով հարկային պարտավորությունները 2021 թվականի հունվարի 1-ից հետո դադարած չեն համարվում և ենթակա են կատարման մինչև օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով և ժամկետներում:

Հարկային պատասխանատվությունը իրավական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է, որն ուղղված է պետության ֆինանսական կայունության և ֆինանսական շահերի ապահովմանը՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթները խախտելու հետևանքով պետությանը պատճառված նյութական վնասի լրիվ ծավալով հատուցման, հարկային իրավախախտում կատարած հարկ վճարողի նկատմամբ լրացուցիչ պարտավորություն սահմանելու, ինչպես նաև նրան հարկային պարտավորության անհապաղ կատարումը պարտադրելու և հետագա հարկային իրավախախտումները կանխարգելելու միջոցով:

Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը...:

«Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 01.01.2021) 8-րդ հոդվածի համաձայն՝ եթե հողի հարկով հարկվող օբյեկտն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է մեկից ավելի հարկ վճարողների, ապա հողի հարկի՝ սույն օրենքով սահմանված պարտավորությունների համար նրանք կրում են համապարտ պատասխանատվություն:

Նույն օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է՝ հողի հարկի հաշվարկման համար հիմք են հանդիսանում հողի սեփականության, մշտական կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հիմնավորող փաստաթղթերը:

«Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ հողի հարկի չափը կապված չէ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից և սահմանվում է հողակտորի միավոր մակերեսի համար հաստատագրված վճարի ձևով, որը վճարվում է տարվա համար: Սույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամուտը: Նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ գյուղատնտեսական նշանակության հողերի (ներառյալ բնակավայրերում բնակչինարարության համար հատկացված, տնամերձ և այգեգործական (ամառանոցային) հողամասերը) համար հողի հարկի դրույքաչափը սահմանվում է դրանց կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամտի 15 տոկոսի չափով:

«Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձանց հողի հարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային տարին, 16-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձինք հողի հարկի տարեկան գումարը սույն հոդվածով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում երկու հավասար մասերով, մինչև հաշվետու տարվա նոյեմբերի 15-ը (ներառյալ):

Հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Մինչև 2018 թվականի հունվարի 1-ը գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում

ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը (հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալը) վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0,15 տոկոսի չափով: Նշված չափերով օրական տույժերը կիրառվում են, եթե հարկային օրենսդրությամբ ավելի նվազ չափ սահմանված չէ:

Վերոհիշյալ տույժը կիրառվում է ժամանակին չմուծված հարկի գումարների (այդ թվում նաև հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի կողմից չվճարված), հարկերի կանխավճարային մուծումների գումարների, ստուգման արդյունքներով հայտնաբերված (պակաս ցույց տրված) հարկվող օբյեկտի գծով հարկի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

ՀՀ հարկային օրենսգրքի (ուժի մեջ է մտել 01.01.2018 թվականին) մինչև 14.05.2020 թվականը գործող խմբագրությամբ 401-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.075 տոկոսի չափով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված տույժը կիրառվում է ժամանակին չմուծված հարկի գումարի (այդ թվում՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի կողմից չվճարված), հարկերի կանխավճարային գումարների, հարկային հսկողության արդյունքներով հայտնաբերված (պակաս ցույց տրված) հարկի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Նույն մասի 4-րդ կետի համաձայն՝ տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասով, ՀՀ հարկային օրենսգրքի 6-րդ, 224-րդ, 225-րդ, 226-րդ, 227-րդ, 236-րդ, 397-րդ հոդվածներով, 447-րդ հոդվածի 1-ին և 1.1-րդ մասերով, «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-4-րդ, 8-րդ, 12-րդ, 14-րդ և 16-րդ հոդվածներով, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 34-րդ հոդվածով, 38-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով, 53-րդ, 58-60-րդ և 89-րդ հոդվածներով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Նվեր Անդրանիկի Հարությունյանից, Մելանյա Ավետիսի Ավետիսյանից, Կառլեն Նվերի Հարությունյանից, Սերժիկ Նվերի Հարությունյանից, Արփիկ Նվերի

Հարությունյանից՝ հոգուտ ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի բյուջեի գանձել ընդհանուր՝ 285071 /երկու հարյուր ութսունհինգ հազար յոթանասունմեկ/ ՀՀ դրամ, որից 2020 թվականը ներառյալ՝ 259731 /երկու հարյուր հիսունինը հազար յոթ հարյուր երեսունմեկ/ ՀՀ դրամ, որից ապառք՝ 159807 /հարյուր հիսունինը հազար ութ հարյուր յոթ/ ՀՀ դրամ, տույժ՝ 99924 /իննսունինը հազար ինը հարյուր քսանչորս/ ՀՀ դրամ և 2021-2024 թվականը ներառյալ՝ 25340 /քսանհինգ հազար երեք հարյուր քառասուն/ ՀՀ դրամ, որից ապառք՝ 12715 /տասներկու հազար յոթ հարյուր տասնհինգ/ ՀՀ դրամ, տույժ՝ 12625 /տասներկու հազար վեց հարյուր քսանհինգ/ ՀՀ դրամ:

2. Մինչև 2020 թվականը ներառյալ հողի հարկի հաշվարկված ապառքը և տույժերը վճարել Խոյ համայնքի Գեղակերտ գյուղի 9003251880044 հաշվեհամարին, 2021-2024 թթ. ներառյալ՝ 900325005925 հաշվեհամարին:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ Խոյ համայնքի ղեկավարին, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարանին՝ երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. մայիսի 26
Խոյ համայնք, գ. Գեղակերտ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ. Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2025 թվականի N 554-Ա

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԶՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի ղեկավար Լյուդվիկ Յայլոյանս, ուսումնասիրելով **Սուրեն Սամվելի Հարությունյանի, Շուշան Մելիկի Հարությունյանի, Լիլիթ Սամվելի Հարությունյանի, Նելլի Սամվելի Հարությունյանի, Հուրիկ Սուրենի Հարությունյանի** նկատմամբ հարուցված թիվ 45/25 վարչական վարույթի նյութերը, պարզեցի՝

Սուրեն Սամվելի Հարությունյանը, Շուշան Մելիկի Հարությունյանը, Լիլիթ Սամվելի Հարությունյանը, Նելլի Սամվելի Հարությունյանը, Հուրիկ Սուրենի Հարությունյանը /ՀՀ Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ. Գեղակերտ, Մաշտոցի փողոց 105 տուն/, հանդիսանալով հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտներ, «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չեն կատարել հարկեր վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ Խոյի համայնքապետարանի աշխատակազմի Բյուջետային մուտքերի ապահովման բաժնի կողմից 2025 թվականի փետրվարի 3-ին «Վեկտոր Պյուս» և *E community* ծրագրերից ստացված տեղեկանքների հիման վրա Խոյի համայնքապետարանը 2025 թվականի ապրիլի 29-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցել է վարչական վարույթ:

Սուրեն Սամվելի Հարությունյանին, Շուշան Մելիկի Հարությունյանին, Լիլիթ Սամվելի Հարությունյանին, Նելլի Սամվելի Հարությունյանին, Հուրիկ Սուրենի Հարությունյանին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով սահմանված կարգով պատշաճ կերպով ծանուցվել է վարչական վարույթի հարուցման մասին՝ ծանուցումն ուղարկվել է /հիմք՝ 30 ապրիլի 2025 թվական. թիվ 45 ծանուցումը/: Վերջիններիս առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 3-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ և կատարել համայնքի հանդեպ առաջացած հարկային պարտավորությունները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ **Սուրեն**

Սամվելի Հարությունյանը, Շուշան Մելսիկի Հարությունյանը, Լիլիթ Սամվելի Հարությունյանը, Նելլի Սամվելի Հարությունյանը, Հուրիկ Սուրենի Հարությունյանը՝ սահմանված կարգով պատշաճ կերպով ծանուցվելուց հետո չեն ներկայացրել պնդում լսում անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լսում չի անցկացվել:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Հիմք ընդունելով գույքային հարկերի հաշվառման համակարգ հանդիսացող «Վեկտոր Պլուս» և *E-community* ծրագրերից ձեռք բերված տվյալները՝ Սուրեն Սամվելի Հարությունյանը, Շուշան Մելսիկի Հարությունյանը, Լիլիթ Սամվելի Հարությունյանը, Նելլի Սամվելի Հարությունյանը, Հուրիկ Սուրենի Հարությունյանը չեն կատարել ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Գեղակերտ գյուղում գտնվող, իրենց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի հարկային պարտավորությունները, որի հետևանքով 2025 թվականի փետրվարի 3-ի դրությամբ գոյացել է՝ **ընդամենը 205530 /երկու հարյուր հինգ հազար հինգ հարյուր երեսուն/ ՀՀ դրամ** հողի հարկի և անշարժ գույքի հարկի հարկային պարտավորություն:

ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Գեղակերտ գյուղում գտնվող 04-087-0052-0013 /0.101 հա/ կադաստրային ծածկագրով բնակելի կառուցապատման հողամասի, 04-087-0131-0022 /0.37 հա/ և 04-087-0131-0023 /0.28 հա/ կադաստրային ծածկագրերով ջրովի վարելահողերի ընդհանուր պարտքը կազմում է՝ 205530 /երկու հարյուր հինգ հազար հինգ հարյուր երեսուն/ ՀՀ դրամ, որից 2020 թվականը ներառյալ՝ 109422 /հարյուր ինը հազար չորս հարյուր քսաներկու/ ՀՀ դրամ, որից ապառք՝ 79709 /յոթանասունինը հազար յոթ հարյուր ինը/ ՀՀ դրամ, տույժ՝ 29713 /քսանինը հազար յոթ հարյուր տասներեք/ ՀՀ դրամ և 2021-2024 թվականը ներառյալ՝ 96108 /իննսունվեց հազար հարյուր ութ/ ՀՀ դրամ, որից ապառք՝ 80248 /ութսուն հազար երկու հարյուր քառասունուրթ/ ՀՀ դրամ, տույժ՝ 15860 /տասնհինգ հազար ութ հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ:

Սուրեն Սամվելի Հարությունյանը, Շուշան Մելսիկի Հարությունյանը, Լիլիթ Սամվելի Հարությունյանը, Նելլի Սամվելի Հարությունյանը, Հուրիկ Սուրենի Հարությունյանը ծանուցումն ստանալուց հետո կատարել են 48994 /քառասունուրթ հազար ինը հարյուր իննսունչորս/ ՀՀ դրամ անշարժ գույքի հարկի վճարում:

Արդյունքում՝ համաձայն 2025 թվականի մայիսի 26-ի *E-community* ծրագրից տեղական հարկերի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքների՝ 04-087-0052-0013 /0.101 հա/ կադաստրային ծածկագրով բնակելի կառուցապատման հողամասի, 04-087-0131-0022 /0.37 հա/ և 04-087-0131-0023 /0.28 հա/ կադաստրային ծածկագրերով ջրովի վարելահողերի հողի հարկի և անշարժ գույքի հարկի գծով պարտավորությունները կազմում են ընդամենը՝ 167379 /հարյուր վաթսունյոթ հազար երեք հարյուր յոթանասունինը/ ՀՀ դրամ, որից 2020 թվականը ներառյալ՝ 109422 /հարյուր ինը հազար չորս հարյուր քսաներկու/ ՀՀ դրամ, որից ապառք՝ 79709 /յոթանասունինը հազար յոթ հարյուր ինը/ ՀՀ դրամ, տույժ՝ 29713 /քսանինը հազար յոթ հարյուր տասներեք/ ՀՀ դրամ և 2021-2024 թվականը ներառյալ՝ 57957 /հիսունյոթ հազար ինը հարյուր հիսունյոթ/ ՀՀ դրամ, որից ապառք՝ 46602 /քառասունվեց հազար վեց հարյուր երկու/ ՀՀ դրամ, տույժ՝ 11355 /տասնմեկ հազար երեք հարյուր հիսունհինգ/ ՀՀ դրամ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

ՀՀ հարկային օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգիրք/ 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են տեղական հարկեր, որոնց տեսակներն են՝ անշարժ գույքի հարկը և փոխադրամիջոցների գույքահարկը:

Օրենսգրքի 224-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար ՀՀ հարկային օրենսգրքի 45-րդ գլխով սահմանված կարգով ՀՀ համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք...

Օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները (հողամասերում կառուցված ստորգետնյա և վերգետնյա շենքերը, շինությունները կամ կառույցները...

Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են հարկ վճարողների և անշարժ գույքի հարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունները և ֆիզիկական անձինք անշարժ գույքի հարկի տարեկան գումարները անշարժ գույքի գտնվելու վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը:

Օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն՝ հարկային իրավախախտում է համարվում հարկ վճարողի կամ հարկային գործակալի հակաիրավական այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ ՀՀ օրենքներով սահմանված է հարկային պատասխանատվություն:

Օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը ավարտված հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող հարկային պարտավորությունները 2018 թվականի հունվարի 1-ից հետո դադարած չեն համարվում և ենթակա են կատարման մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով և ժամկետներում: Նույն հոդվածի 1.1-րդ մասի համաձայն՝ մինչև օրենսգրքի 11-րդ և 12-րդ բաժիններն ուժի մեջ մտնելն ավարտված հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ գույքահարկի և հողի հարկի գծով հարկային պարտավորությունները 2021 թվականի հունվարի 1-ից հետո դադարած չեն համարվում և ենթակա են կատարման մինչև օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով և ժամկետներում:

Հարկային պատասխանատվությունը իրավական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է, որն ուղղված է պետության ֆինանսական կայունության և ֆինանսական շահերի ապահովմանը՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթները խախտելու հետևանքով պետությանը պատճառված նյութական վնասի լրիվ ծավալով հատուցման, հարկային իրավախախտում կատարած հարկ վճարողի նկատմամբ լրացուցիչ պարտավորություն սահմանելու, ինչպես նաև նրան հարկային պարտավորության անհապաղ կատարումը պարտադրելու և հետագա հարկային իրավախախտումները կանխարգելելու միջոցով:

Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը...

«Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 01.01.2021) 8-րդ հոդվածի համաձայն՝ եթե հողի հարկով հարկվող օբյեկտն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է մեկից ավելի հարկ վճարողների, ապա հողի հարկի՝ սույն օրենքով սահմանված պարտավորությունների համար նրանք կրում են համապարտ պատասխանատվություն:

Նույն օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է՝ հողի հարկի հաշվարկման համար հիմք են հանդիսանում հողի սեփականության, մշտական կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հիմնավորող փաստաթղթերը:

«Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ հողի հարկի չափը կապված է վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից և սահմանվում է հողակտորի միավոր մակերեսի համար հաստատագրված վճարի ձևով, որը վճարվում է տարվա համար: Սույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամուտը: Նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ գյուղատնտեսական նշանակության հողերի (ներառյալ բնակավայրերում բնակչինարարության համար հատկացված, տնամերձ և այգեգործական (ամառանոցային) հողամասերը) համար հողի հարկի դրույքաչափը սահմանվում է դրանց կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամտի 15 տոկոսի չափով:

«Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձանց հողի հարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային տարին, 16-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձինք հողի հարկի տարեկան գումարը սույն հոդվածով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում երկու հավասար մասերով, մինչև հաշվետու տարվա նոյեմբերի 15-ը (ներառյալ):

Հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Մինչև 2018 թվականի հունվարի 1-ը գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը (հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալը) վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0,15 տոկոսի չափով: Նշված չափերով օրական տույժերը կիրառվում են, եթե հարկային օրենսդրությամբ ավելի նվազ չափ սահմանված չէ:

Վերոհիշյալ տույժը կիրառվում է ժամանակին չմուծված հարկի գումարների (այդ թվում նաև հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի կողմից չվճարված), հարկերի կանխավճարային մուծումների գումարների, ստուգման արդյունքներով հայտնաբերված (պակաս ցույց տրված) հարկվող օբյեկտի գծով հարկի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

ՀՀ հարկային օրենսգրքի (ուժի մեջ է մտել 01.01.2018 թվականին) մինչև 14.05.2020 թվականը գործող խմբագրությամբ 401-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0,075 տոկոսի չափով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված տույժը կիրառվում է ժամանակին չմուծված հարկի գումարի (այդ թվում՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի կողմից չվճարված), հարկերի կանխավճարային գումարների, հարկային հսկողության արդյունքներով

հայտնաբերված (պակաս ցույց տրված) հարկի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Նույն մասի 4-րդ կետի համաձայն՝ տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասով, ՀՀ հարկային օրենսգրքի 6-րդ, 224-րդ, 225-րդ, 226-րդ, 227-րդ, 236-րդ, 397-րդ հոդվածներով, 447-րդ հոդվածի 1-ին և 1.1-րդ մասերով, «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-4-րդ, 8-րդ, 12-րդ, 14-րդ և 16-րդ հոդվածներով, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 34-րդ հոդվածով, 38-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով, 53-րդ, 58-60-րդ և 89-րդ հոդվածներով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սուրեն Սամվելի Հարությունյանից, Շուշան Մելսիկի Հարությունյանից, Լիլիթ Սամվելի Հարությունյանից, Նելլի Սամվելի Հարությունյանից, Հուրիկ Սուրենի Հարությունյանից՝ հոգուտ ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի բյուջեի գանձել ընդհանուր՝ 167379 /հարյուր վաթսույոթ հազար երեք հարյուր յոթանասունինը/ ՀՀ դրամ, որից 2020 թվականը ներառյալ՝ 109422 /հարյուր ինը հազար չորս հարյուր քսաներկու/ ՀՀ դրամ, որից ապառք՝ 79709 /յոթանասունինը հազար յոթ հարյուր ինը/ ՀՀ դրամ, տույժ՝ 29713 /քսանինը հազար յոթ հարյուր տասներեք/ ՀՀ դրամ և 2021-2024 թվականը ներառյալ՝ 57957 /հիսույոթ հազար ինը հարյուր հիսույոթ/ ՀՀ դրամ, որից ապառք՝ 46602 /քառասունվեց հազար վեց հարյուր երկու/ ՀՀ դրամ, տույժ՝ 11355 /տասնմեկ հազար երեք հարյուր հիսունհինգ/ ՀՀ դրամ:

2. Մինչև 2020 թվականը ներառյալ հողի հարկի հաշվարկված ապառքը և տույժերը վճարել Խոյ համայնքի Գեղակերտ գյուղի 9003251880044 հաշվեհամարին, 2021-2024 թթ. ներառյալ՝ 900325005925 հաշվեհամարին:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ Խոյ համայնքի ղեկավարին, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարանին՝ երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. մայիսի 26
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. hawugte khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մայիսի 2025 թվականի N 555-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով այն, որ բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների պահանջները, բնակելի տունը և շենք-շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերը և չեն առաջացնում սերվիտուտ, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, հիմք ընդունելով այն, որ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Այգեշատ գյուղի բնակիչ Արմենակ Համայակի Մկրտչյանը դիմել է Արմավիրի մարզի Խոյ համայնքի Այգեշատ գյուղի Գետափնյա փողոց թիվ 14 բնակելի տուն /04-011-0020-0026 կադաստրային ծածկագիր /հասցեում գտնվող իրեն պատկանող / ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր 2025 թվականի փետրվարի 3-ի սեղանամատյան 590 / 0,18 հա հողամասի և նրա վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Այգեշատ գյուղի Գետափնյա փողոց թիվ 14 բնակելի տուն /04-011-0020-0026 կադաստրային ծածկագիր /գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Արմենակ Համայակի Մկրտչյանը /ծնված 26.08.1960թ./ գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0,18 հա և դրան կից 0,036 հա ավել օգտագործվող հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ / բնակելի տուն կիսանկուղ՝ 38,1 ք/մ մակերեսով կառուցված 1950թ., բնակելի տուն՝ 64 ք/մ մակերեսով

կառուցված 1950թ., բնակելի տուն՝ 58,6 ք/մ մակերեսով կառուցված 1970թ., բնակելի տուն՝ 103,4 ք/մ մակերեսով կառուցված 1977թ., անասնաշենք՝ 41,6 ք/մ մակերեսով կառուցված 1975թ., ջրավազան՝ 8,4 ք/մ մակերեսով կառուցված 1980թ., թոնրատուն՝ 26,6 ք/մ մակերեսով կառուցված 1980թ. և պարիսպ՝ 1,5 ք/մ մակերեսով կառուցված 1977թ./:

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեին գրանցել Արմենակ Համայակի Մկրտչյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4. Արմավիրի մարզի Խոյ համայնքի Այգեշատ գյուղի 04-011-0020-0026 կադաստրային ծածկագրով հողամասին տալ նոր հասցե՝ Արմավիրի մարզ Խոյ համայնք գյուղ Այգեշատ, Գետափնյա փողոց թիվ 14 բնակելի տուն:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. մայիսի 27
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մայիսի 2025 թվականի N 556-Ա

**ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0,036 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով, նկատի ունենալով, որ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերմիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով քաղաքացի Արմենակ Համայակի Մկրտչյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Ճանաչել Արմավիրի մարզի, Խոյ համայնքի Այգեշատ գյուղի Գետափնյա փողոց թիվ 14 բնակելի տուն հասցեում /04-011-0020-0026 կադաստրային ծածկագիր/ գտնվող Արմենակ Համայակի Մկրտչյանին / հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր 2025 թվականի փետրվարի 3-ի սեղանամատյան 590 / պատկանող 0,18 հա օրինական հողամասին կից ավել օգտագործվող 0,036 հա հողամասի նկատմամբ քաղաքացի Արմենակ Համայակի Մկրտչյանի սեփականության իրավունքը:

2.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2025թ. մայիսի 27
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



Լ.ՅԱՅԼՈՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մայիսի 2025 թվականի N 557-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 22-ի N153-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծիածան գյուղում գործող անհատ ձեռնարկատեր Արթուր Գևորգյանի կողմից 2025 թվականի մայիսի 23-ին ներկայացրած հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Թույլատրել անհատ ձեռնարկատեր Արթուր Գևորգյանին Խոյ համայնքի Ծիածան գյուղի Ծիածանի խճուղի 12 հասցեում գտնվող հիմնական շինությունում /կադաստրային ծածկագիր 04-053-0022-0027/ կազմակերպել և իրացնել հանրային սնունդ՝ 2025 թվականի II-րդ եռամսյակի համար:

2.Խոյի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնին՝ անհատ ձեռնարկատեր Արթուր Գևորգյանին տալ համապատասխան թույլտվություն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. մայիսի 27
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ. Գեղակերտ, Մ. Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մայիսի 2025 թվականի N 558-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 12-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 22-ի N153-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծիածան գյուղում գործող անհատ ձեռնարկատեր Արթուր Գևորգյանի կողմից 2025 թվականի մայիսի 23-ին ներկայացրած հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Թույլատրել անհատ ձեռնարկատեր Արթուր Գևորգյանին Խոյ համայնքի Ծիածան գյուղի Ծիածանի խճուղի 12 հասցեում գտնվող հիմնական շինությունում /կադաստրային ծածկագիր 04-053-0022-0027/ տեղադրելու արտաքին գովազդ՝ 2025 թվականի ապրիլի 1-ից մինչև հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածի համար:
- Խոյի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնին՝ անհատ ձեռնարկատեր Արթուր Գևորգյանին տալ համապատասխան թույլտվություն:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. մայիսի 27
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մայիսի 2025 թվականի N 559-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով այն, որ բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների պահանջները, բնակելի տունը և շենք-շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերը և չեն առաջացնում սերվիտուտ, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, հիմք ընդունելով այն, որ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ամբերդ գյուղի բնակիչ Սերգեյ Աղասու Սարգսյանը դիմել է Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ամբերդ գյուղի Կոմիտասի փողոց թիվ 3 բնակելի տուն /04-008-0007-0020 կադաստրային ծածկագիր /հասցեում գտնվող իրեն պատկանող / ըստ Արմավիրի մարզի Ամբերդ համայնքի տնտ. N 1/1 գրքի քաղվածքի և սեփականաշնորհման հանձնաժողովի N1 նիստի 1991 թվականի մարտի 3-ի N2 որոշման / 0.27 հա հողամասի և նրա վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ամբերդ գյուղի Կոմիտասի փողոց թիվ 3 բնակելի տուն /04-008-0007-0020 կադաստրային ծածկագիր /գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Սերգեյ Աղասու Սարգսյանի /ծնված 08.05.1972թ/ գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0,27 հա և դրան կից 0,03 հա ավել օգտագործվող հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ / բնակելի

տուն նկուղ՝ 14,9 ք/մ մակերեսով կառուցված 1966թ., աստիճանահարթակ՝ 2,5 ք/մ մակերեսով կառուցված 1966թ., բնակելի տուն՝ 91,6 ք/մ մակերեսով կառուցված 1966թ., բնակելի տուն՝ 4 ք/մ մակերեսով կառուցված 1993թ., բաց պատշգամբ՝ 56,7 ք/մ մակերեսով կառուցված 1966թ., ծածկած մուտք՝ 22,2 ք/մ մակերեսով կառուցված 1970թ., մառան՝ 15,1 ք/մ մակերեսով կառուցված 1970թ., թոնրատուն՝ 16,4 ք/մ մակերեսով կառուցված 1970թ., խորդանոց՝ 8,4 ք/մ մակերեսով կառուցված 1970թ. և անասնաշենք՝ 29,4 ք/մ մակերեսով կառուցված 1993թ./:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեին գրանցել Սերգեյ Աղասու Սարգսյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4. Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ամբերդ գյուղի 04-008-0007-0020 կադաստրային ծածկագրով հողամասին տալ նոր հասցե՝ Արմավիրի մարզ Խոյ համայնք գյուղ Ամբերդ, Կոմիտասի փողոց թիվ 3 բնակելի տուն:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. մայիսի 27
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մայիսի 2025 թվականի N 560-Ա

ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0,03 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով, նկատի ունենալով, որ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով քաղաքացի Սերգեյ Աղասու Սարգսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Ճանաչել Արմավիրի մարզի, Խոյ համայնքի Ամբերդ գյուղի Կոմիտասի փողոց թիվ 3 բնակելի տուն հասցեում /04-008-0007-0020 կադաստրային ծածկագիր/ գտնվող Սերգեյ Աղասու Սարգսյանին / հիմք՝ ըստ Արմավիրի մարզի Ամբերդ համայնքի տնտ. N 1/1 գրքի քաղվածքի և սեփականաշնորհման հանձնաժողովի N1 նիստի 1991 թվականի մարտի 3-ի N2 որոշման/ պատկանող 0,27 հա օրինական հողամասին կից ավել օգտագործվող 0,03 հա հողամասի նկատմամբ քաղաքացի Սերգեյ Աղասու Սարգսյանի սեփականության իրավունքը:

2.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Լ.ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. մայիսի 27
Խոյ համայնք, գ. Գեղակերտ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք
գ. Գեղակերտ, Մաշտոցի 30, 060-88-89-99, էլ. հասցե՝ khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մայիսի 2025 թվականի N 561-Ա

**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, <<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, հաշվի առնելով կադաստրի կոմիտեում հաշվառված, չափագրման տվյալների մուտքագրման 2024GSET7Y, ծածկագիրը և հիմք ընդունելով Արտավազդ Պողոսի Սարգսյանի դիմումը՝ իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հովտամեջ գյուղի Ե. Չարենցի փողոց թիվ 1 բնակելի տուն հասցեում կառուցված ինքնական շինությունները օրինականացնելու համար, կառույցը չի հակասում քաղաքաշինական նորմերը և չի առաջացնում սերվիտուտ, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերի նախատեսված գոտիներում գտնվող կառույցների՝ ծրագրի պայմաններին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել քաղաքացի Արտավազդ Պողոսի Սարգսյանի սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հովտամեջ գյուղի Ե. Չարենցի փողոց թիվ 1 բնակելի տուն հասցեում գտնվող /իրավունքի պետական գրանցման վկայականի N 01062021-04-0066/ 04-060-0005-0030 կադաստրային ծածկագրով 0,1 հա փաստացի օգտագործվող հողամասի վրա կառուցված ընդամենը 329,2 քմ արտաքին մակերեսով ինքնական շինությունները, / 300,7 քմ մակերեսով բնակելի տուն, կառուցված՝ 2011թ., 18,7 քմ մակերեսով անասնաշենք, կառուցված՝ 2012թ. և 9,8 քմ մակերեսով թոնրատուն, կառուցված՝ 2013թ./:

2. Ինքնակամ կառույցների օրիկանացման համար սահմանված վճարը կազմում է 398010 /երեք հարյուր իննսուներեք հազար տասը/ ՀՀ դրամ:

3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը Արտավազդ Պողոսի Սարգսյանը /ն/ք 011300761, տրված 15.09.2021թ, 057-ի կողմից/ պետք է 60-օրյա ժամկետում վճարի Արմավիրի մարզի Խոյ համայնքի վարչական եկամուտների 900325188150 հաշվեհամարին՝ 398010 /երեք հարյուր իննսուներեք հազար տասը/ ՀՀ դրամ, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025 թվականի մայիսի 27
Խոյ համայնք գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մայիսի 2025 թվականի N 562-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՍԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆԿԱՏՄԱՍԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով այն, որ բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների պահանջները, բնակելի տունը և շենք-շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասը ընդգրկված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերը և չեն առաջացնում սերվիտուտ, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, հիմք ընդունելով այն, որ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հայթաղ գյուղի բնակիչ Սուրեն Հրայրի Աբրամյանը դիմել է Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հայթաղ գյուղի Ա. Առաքելյան փողոց թիվ 17 բնակելի տուն /04-055-0014-0007 կադաստրային ծածկագիր /հասցեում գտնվող իրեն պատկանող / ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր 2025 թվականի փետրվարի 11-ի սեղանամատյաններ 1182 և 1184/ 0,12 հա հողամասի և նրա վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հայթաղ գյուղի Ա. Առաքելյան փողոց թիվ 17 բնակելի տուն /04-055-0014-0007 կադաստրային ծածկագիր /գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Սուրեն Հրայրի Աբրամյանի /ծնված 11.07.1956թ/ գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0,1136 հա փաստացի օգտագործվող հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ / բնակելի տուն նկուղ՝ 6,7 ք/մ մակերեսով կառուցված 1995թ., բնակելի տուն նկուղ՝ 135,2 ք/մ մակերեսով կառուցված

1954թ., բնակելի տուն՝ 89,4 ք/մ մակերեսով կառուցված 1995թ., բնակելի տուն ք/պ՝ 11,8 ք/մ մակերեսով կառուցված 1995թ., բնակելի տուն՝ 124,1 ք/մ մակերեսով կառուցված 1954թ., բնակելի տուն՝ 64,8 ք/մ մակերեսով կառուցված 1995թ., բնակելի տուն՝ 30,9 ք/մ մակերեսով կառուցված 1995թ., բնակելի տուն՝ 16,8 ք/մ մակերեսով կառուցված 1954թ., խորդանոց՝ 7 ք/մ մակերեսով կառուցված 1995 թ., պարիսպ՝ 1 ք/մ մակերեսով՝ կառուցված 1995թ. և պարիսպ 1,8 ք/մ մակերեսով՝ կառուցված 1995թ. / :

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեին գրանցել Սուրեն Հրայրի Աբրամյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4. Արմավիրի մարզի էսոյ համայնքի Հայթաղ գյուղի 04-055-0014-0007 կադաստրային ծածկագրով հողամասին տալ նոր հասցե՝ Արմավիրի մարզ էսոյ համայնք գյուղ Հայթաղ, Ա. Առաքելյան փողոց թիվ 17 բնակելի տուն:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. մայիսի 27
Էսոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ. Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մայիսի 2025 թվականի N 563-Ա

ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0,0025 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով, նկատի ունենալով, որ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով քաղաքացի Սամվել Հովհաննեսի Սիմոնյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ճանաչել Արմավիրի մարզի, Խոյ համայնքի Շահումյան գյուղում /04-077-0376-0024 կադաստրային ծածկագիր/ գտնվող Սամվել Հովհաննեսի Սիմոնյանին, / հիմք՝ համաձայն ՀՍՍՀ մինիստրների խորհրդի 1988 թվականի մարտի 29-ի նո. 163 էջմիածնի շրջսովետի գործկոմի արխիվային տեղեկանք/ պատկանող 0,06 հա օրինական հողամասին կից ավել օգտագործվող 0,0025 հա հողամասի նկատմամբ քաղաքացի Սամվել Հովհաննեսի Սիմոնյանի սեփականության իրավունքը:

2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետություն կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. մայիսի 30
Խոյ համայնք, գ. Գեղակերտ